14. ՄԱՐԶԸ

Ինիս ա, չինիս մին մարթ, մին կնեգյ։ Էս մարթը նան կնեգյը ուրուր նհետ լավ ըպրես ըն ըլալ։ Մեհետ կնեգյը հիվնդնաս ա սոտ տեղան, հանցու վեր մարթին ղարկե օրիշ տեղ։

Մարթը հըրցնես ա.—Ա՛ կնեգյ, հի՞նչ պիրիմ քյըրեզ հետե, վեր սղանաս։

Կնեգյը մարթին ըսես ա. — Ա՛ մարթ, աշխարքես տակեն ամենալավ ճուրը պեր, վեր իմիմ, մին ռոպեյումը կսղանամ։

Մարթը էրկան մտծես ա, վերչը քթենաս, վեր էտ ճուրը անմահական ճուրն ա, վեր հեռու տեղ ա ինիս։

Մին օր մարթը ճընապար ա ընգնես գրի էտ ճուրը։ Ճընապարեն պտհես ա ծին քըշիս մին մարթ, էտ մարթը հրցնես ա.— Ա՛յ մարթ, շտե՞ղ ըս քյի՛ս։

Էն էլ ըսես ա.— Քյիս ըմ անմահական ճուր պիրիմ, կնեգյըս հիվանդ ա։

Էտ մարթն ըսես ա.— Քու կնեգյըտ խփիս ա, հիվանդ չի, ետ տաու քնինքյ տոն, կնգա խըելքավ մել ընգնե՞լ։

Էտ մարթը ըսես ա.— Իմ կնեգյըս լավ կնեգյ ա, տի պենները փոնել չի։

Էրգան մտծելանը ետը մարթը ետ ա տրոնաս, մարշ կյաս հըղրցավերեն նհետ էն պյմանավը, վեր թա հըղրցավերեն ասածը դուզ ինի, էտ կնգանը մարթը հըղրցավերեն մին չվալ պրինձ տա, թա ինքյը դուզ ինի, հըղրցավերը ուրան մին չվալ պրինձ տա։ Կրն-

գանը մարթը մտնես ա ծիավերեն չվալեն մաշը, մինա̈կ աշկերը պեց թուղես, վեր ո̈ւրա̈նց շենը տեսնա, ո̈ւրա̈նց տոնը նշանց տա։

Ծրնապարեն էրկան շըշըրվելավ, հսնես ըն շենը, շտեղ ըպրես ըն էտ կնեգյը նան էտ մարթը։ Ծիավերը քյիս ա, հսնես տոնը, հրցնես.

— Ա՛յ կնեգյ, էս իրիգյունըս ղոնաղ կպահի՞ս։

Կնեգյը ըսես ա.— Խե՞ չըմ պահիլ, աշկես յրա, իմ մարթըս ղարկալ ըմ օրիշ տեղ, ըրխըյին ըմ ընդա կողմանի, կռըեվ չանել։

Էտ կնեգյը եր ա կնաս հավերը մըրթուտես, տըպըկես ղունաղեն հետե։ Մարթը էտ լոխ տըսնաս ա, չվալեն մեշան աշկերը պլզած։

Հըղըցավերը հրցնես ա.— Ջվալեն մաշան եշող աշկեր, քու ասածըտ ա գո՞ւզ, թա̈ իմ ասածս։

Մարթը եր ա կնաս, մա̈րչը տաս, համ էլ էնքան կնգանը յրան կըզնվես ա, ըսես.— Ա՛յ քու հվգարիմ ինիլըտ կլխետ տամ, հա̈լա̈ քյըեզ նշանց կտամ, թա հունց կխափին, մարթին քմակեն քյեփ անին։

Ըսես ա, ղա̈մա̈ն պիրիս, կնգանը սպընես։